

Համեմատելով կը տեսնուի՝ որ 1711ին գրուածը նոյն է 1709ի գրութեան հետ, միայն սրբագրութիւններ եւ պարագայի յարմար փոփոխութիւններ կատարուած են: Վասն զի 1709ի թուղթը կ'երեւայ թէ նոյն տարւոյ վերջերը Հռոմ Ս. Քահանայապետին ձեռքն հասած է, պատասխանը յաջորդ տարւոյ սկիզբը գրուած եւ ղրկուած է: Այս պատասխանը կաթողիկոսին դեռ չհասած, արկածախնդիր Իսրայէլ Օրի հայ իշխանն, կաթողիկոսին ներկայացած է իւրեւ պատգամաւոր Ս. Քահանայապետի 1709ին, հաւանաբար Յունիսին, ինչպէս կ'իմացուի կաթողիկոսին 7 Յուլիս 1709ին առ Պետրոս Մեծ Յար գրած նամակէն (կ. Եզեան, Յաւելուած, Nr. 159): Անտարակոյս կաթողիկոսին հետ խօսած է Օրի, առ Ս. Քահանայապետ գրած նամակի մասին: Կաթողիկոսը մինչեւ 1711 պատասխան մ'առած չըլլալով՝ նոյն տարին Ապրիլ 16 թուականով իր նամակը կրկին գրած է, Օրիի յիշատակութիւն ընելով եւ այս պատճառաւ կարեւոր համարած փոփոխութիւններն կատարելով դարձեալ ղրկած է Հռոմ, ինչպէս Ալեքսանդր 1711 թուակիր նամակին վերջն ինքնին կը հաստատէ, Թովմաս Արքեպս.ի ձեռօք (Վանանդեցի, որ յետոյ շատ նշանաւոր եղաւ Ամսդերտամ գեղեցիկ տպագրութիւններով), որ երբ Հռոմ եկաւ, եւ այնտեղ տեսնուելով, որ Ս. Քահանայապետին նամակին պատասխանը չէ բերուածը, եւ սպասուած կաթողիկէ հաւատոյ դաւանու-